

ՋՈՒԼԻԵՏԱ ՎՈԼՈՂԻԱՅԻ  
ՆԱԶԱՐՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի  
ակադեմիական երգեցողության ամբիոնի դոցենտ  
E-mail: [julianazaryan38@gmail.com](mailto:julianazaryan38@gmail.com)  
Doi:10.58580/18290019-2024.1-2-39

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի  
երաշխավորությամբ՝ Օլյա Յուրիի Նուրիջանյանի 11.4.2025 թ.,  
Գրախոսներ 2.3.2025 թ. և 7.3.2025 թ.  
ընդունվել է տպագրության՝ 20.4.2025 թ.,  
ներկայացրել է հեղինակը՝ 10.2.2025 թ.:  
© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution  
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

ՕՒԵՄԵՆՆԵՐ ԵՐԳԵՍՏԱՆՆ ԱՐՎԵՍՏ

## ՄԱԶԱՆԴԱՐՅԱՆԱԿԱՆ ԱԼՄԱՍՏԸ

### Անվորիում

Տվյալ հոդվածը Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ստեղծման և Տաթևիկ Սազանդարյանի կերտած Ալմաստի դերերգի մասին է: Երաժշտիկում է, թե ինչպես է Ա. Սպենդիարյանը համառոտ փնտրել հերոսական մոտիվներով պոեմի իր ապագա օպերայի համար և, ծանոթանալով Հովհաննես Թումանյանի և նրա պոեմների հետ՝ ընտրում բանաստեղծի «Թմկաբերդի առումը» պոեմը: Հոդվածում շարադրվում է նաև Տաթևիկ Սազանդարյանի՝ Ալմաստի դերակատարության մասին, թե ինչպես է 23 տարեկան երգչուհին փայլուն կերպով հաղթահարել է այդ դժվարին դերերգը և ինչպիսի արձագանք ունեցավ թե՛ լայն ունկնդրի, և թե՛ երաժշտագետների շրջանակում:

**Բանալի-բառեր.** դասական երաժշտություն, հայկական օպերա, արտիստիզմ, թատրոն, Տաթևիկ Սազանդարյան, մեձո-սոպրանո:

### Abstract

Singer. Associate Professor at YSC Julietta Vladimir Nazaryan. - "The Sazandaryan Almast".

This article focuses on the creation of Alexander Spendiaryan's opera "Almast" and the interpretation of the singing part by Tatevik Sazandaryan. It outlines how A. Spendiaryan persistently searched for a plot with heroic motifs for his future opera and, becoming acquainted with Hovhannes Tumanyan and his poems, ultimately chose his poem "The Capture of Tmkaberd". The article also discusses Tatevik Sazandaryan's portrayal of the part of Almast - how, at just 23 years old, the singer masterfully overcame the challenges of this demanding role and the reception it received from both the general audience and musicologists.

**Key Words:** classical music, Armenian opera, artistry, theatre, Tatevik Sazandaryan, mezzo-soprano.

### Абстракт

Певица, доцент Ереванской государственной консерватории им. Комитаса Джульетта Владимировна Назарян. - «Алмаст» Сазандарян».

Эта статья посвящена созданию оперы Александра Спендиаряна "Алмаст" и интерпретации вокальной партии Алмаст Татевик Сазандарян. В ней говорится о том, как А. Спендиарян настойчиво искал сюжет с героическими мотивами для своей будущей оперы и, познакомившись с Ованесом Туманяном и его стихами, в конечном итоге остановил свой выбор на его поэме "Взятие Тмкаберда". В статье также говорится о том, как Татевик Сазандарян исполняла партию Алмаст, о том, как в свои 23 года певица мастерски справилась с трудностями, связанными с этой ответственной ролью, и о том, как она была воспринята как широкой аудиторией, так и музыковедами.

**Ключевые слова:** классическая музыка, армянская опера, артистизм, театр, Татевик Сазандарян, меццо-сопрано.

Նեյ, պարոններ, ականջ արեք  
 Թափառական աշուղին,  
 Միրուն տիկնայք, ջահել տղերք,  
 Լավ ուշ դրեք իմ խաղին:  
 Մենք ամենքս հյուր ենք կյանքում  
 Մեր ծննդյան փուչ օրից,  
 Չերթով գալիս անց ենք կենում  
 Էս անցավոր աշխարհից:  
 Անց ենք կենում... միայն անմահ  
 Գործն է խոսվում լավ ու վատ.  
 Ա՛խ, երանի՜ ով մարդ կրգա  
 Ու մարդ կերթա անարատ:

*Հովհաննես Թումանյան*

*Ալեքսանդր Սպենդիարյանը հայ ակադեմիական (դասական) երաժշտության հիմնադիրն է, իսկ «Ալմաստ» օպերան՝ նրա ստեղծագործական ճանապարհի գագաթնակետը:*

*Իրապես այս ստեղծագործության մեջ կենտրոնացել է այն լավագույնը, ինչը կար իր արվեստում՝ ամենաբնորոշը և հատկանշականը (4. էջ 34): «Ալմաստ» օպերան նախ և առաջ ապշեցնում է բարձր գեղարվեստականությամբ: Այն կարելի է համաշխարհային օպերային գրականության ցանկացած դասական երկերին թվագրել և համեմատել: «Հարուստ և գեղեցիկ նվագախումբ, պոլիֆոնիկ վարպետություն, լեյտմոտիվային զարգացման վիրտուոզ տեխնիկա, երաժշտական լեզվի ինքնատիպություն և արտահայտչություն. այս ամենը «Ալմաստին» հաստուկ տեղ է ապահովում XX դարի լավագույն օպերային ստեղծագործությունների կողքին և բացառիկ տեղ հատկացնում նրան հայ ազգային օպերային արվեստում» (6. էջ 112):*

*Մեծ է այս օպերայի նշանակությունը հայկական օպերային արվեստի պատմության մեջ: «Ալմաստը» առաջին հայկական, ռեալիստական, հայրենասիրական օպերան է, կոմպոզիտորի երկարամյա աշխատանքի պտուղն է, որը գրել է 1918-1928 թթ: Սպենդիարյանը քաջ գիտակցում էր, որ օպերա ստեղծելու համար նախևառաջ, հարկավոր է կոմպոզիտորական հմտություն:*

*Այդ պատճառով սկզբում նա փորձում է իր ուժերը երաժշտական արվեստի տարբեր բնագավառներում:*

*Միմֆոնիկ ստեղծագործություններում («Ղրիմյան էսքիզներ», «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկեր) Սպենդիարյանը տիրապետում է նվագախմբային տեխնիկային, սիմֆոնիկ զարգացման մեթոդներին: Նրա ստեղծագործությունների պայծառ արտահատչականությունը, և արևելյան գունեղությունն ստացավ ավելի էական զարգացում «Ալմաստ»-ում:*

*Սպենդիարյանը համառորեն փնտրում էր պուժե իր ապագա օպերայի համար: Կոմպոզիտորին գրավում է հայկական պուժեներով թեմատիկան, որովհետև նա մտադրվել էր ստեղծել հայկական ազգային օպերա:*

*«1916 թվականին նա ծանոթանում է Հովհաննես Թումանյանի հետ Մարտիրոս Մարյանի նախաձեռնությամբ, ով խորհուրդ տվեց իր օպերայի համար ընտրել Թումանյանի պոեմներից մեկը: Այդ ծանոթությունն սկիզբ դրեց երկու*

*մեծությունների համագործակցությանը, որը հարստացրեց հայկական երաժշտությունն այնպիսի մարգարիտով, ինչպիսին «Ալմաստ» օպերան է» (4. էջ 34): Սպենդիարյանն իր օպերայի համար փնտրում էր հերոսական մոտիվներով պուժե և այդ պատճառով ընտրեց Թումանյանի «Թմկաբերդի առումը»: Պոեմը խորը ժողովրդական է իր բովանդակությամբ, որտեղ գովերգվում է հերոսությունը, ազատասիրությունը, սերը Հայրենիքի նկատմամբ, խարանվում են նվաճողությունը, իշխանատենչությունը, դավաճանությունը:*

*1916 թվականին Սպենդիարյանն սկսում է աշխատել օպերայի ստեղծմամբ, որը տևում է մինչև 1828 թվականը:*

*Նետաքրքիր են Թումանյանի հիշողությունները Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի իրենց համատեղ աշխատանքների մասին: Մինչև ուշ երեկո բանաստեղծը և կոմպոզիտորը միասին վերլուծում էին պոեմը, բաժանում պատկերների և գործողությունների: Թումանյանը գլխավոր հերոսուհու անունն առաջարկում է Գոհար դիել, բայց հետագայում այն վերանվանվում է Ալմաստ անունով:*

*Սպենդիարյանը խնդրում է Թումանյանին շարունակել իրենց հանդիպումները և համատեղ գրել լիբրետտոն: Բայց ինչ-ինչ պատճառներով Թումանյանը չի կարողանում պահել խոստումը և լիբրետտոն գրում է ռուս բանաստեղծուհի Մոֆյա Յակովի Պառնոկը: Վաղաժամ մահը խանգարեց կոմպոզիտորին ավարտին հասցնել օպերան: Այն ավարտում է կոմպոզիտոր Շտեյնբերգը:*

*«Ալմաստ»ն առաջին անգամ բեմադրվել է 1930 թվականին Մոսկվայի Մեծ թատրոնի մասնաճյուղում Ա. Սպենդիարյանի մահից հետո: Նույն թվականին Օդեսսայի օպերայի և բալետի թատրոնում, 1932 ին՝ Թբիլիսիում (3. էջ 144):*

*1933-ին օպերան բեմադրվել է Երևանում, որի առաջնախաղով էլ նշվում է Երևանի Օպերայի և բալետի թատրոնի բացումը:*

*1939 թվականին Երևանի օպերային թատրոնում լիբրետտոյում մի շարք փոփոխություններ մտցվեցին, որոնք ավելի լիարժեք բացահայտեցին Թումանյանի պոեմի գաղափարը և Ա. Սպենդիարյանի մտահաղացումը: Այդ փոփոխությունների հետ կապված Շտեյնբերգն օպերային համարներին ավելացրեց մի քանի նոր համար:*

*Երկու խորաթափանց ու իմաստուն հեղինակ՝ Թումանյանն ու Սպենդիարյանը, իրենց հոշակավոր էրկը ստեղծելիս, բազմապլան ու բարդ նյութ են ընտրել: Թե՛ բուն պոեմում և թե՛ երաժշտության միջոցով Թաթուլի դյուցազնական բնավորությանը ուղեկցում էր անձնագոհության, վեհ ու կորովի քաջության մոտիվ: Դրան հակադրվում է պատվասիրության ու փառասիրության սայթաքիչ ուղու ողբերկական մարմնացումը հանդիսացող տիրուհու կերպարը:*

*1939 թվականին Հայաստանը պատրաստվում էր իր արվեստի և գրականության տասնօրյակին: Ենթադրվում էր, որ այն կբացվի Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի նոր բեմադրությամբ: Օպերան Ալմաստի դերակատար չունեք: Որոշում են Մոսկվայից հրավիրել, բայց Մոսկվան*

# Կ ա տ ա ր ո ղ ա կ ա ն ա ր վ ե ս տ

մերժում է՝ պահանջելով, որ ազգային օպերայի գլխավոր հերոսուհու դերակատարը լինի հայ դերասանուհի: Ի գարմանս շատերի օպերային գլխավոր հերոսուհու դերը հանձնարարվեց Տաթևիկ Սազանդարյանին, ով ընդամենը 23 տարեկան երիտասարդ երգչուհի էր և ով ոչ միայն հաղթահարեց այս դժվար դերերգը, այլ հաղթահարեց փայլուն կերպով, ընդ որում արտասովոր, բացառիկ պայմաններում (պատասխանատվությունն առանձնապես մեծ էր, որովհետև ներկայացումը տասնօրյակի ծրագրում էր) (5. էջ 13): Այնպես Սազանդարյանը զարմացրեց, ապշեցրեց ժամանակակիցներին: Հենց այդպիսին էր թե՛ շարքային հանդիսականների, թե՛ օպերային արվեստի հմուտ գիտականների կարծիքը: Այդ ներկայացմանը նվիրված բազմաթիվ արձագանքներում թերևս առանձնապես ուշագրավ է նշանավոր Մարիյա Մաքսակովայի կարծիքը. «Սազանդարյանն ինձ ապշեցրեց գեղեցիկ, արտասովոր փափուկ հնչելով ձայնով, որին նա հետոքեն տիրապետում է, փայլուն դիմախաղով: Այդ փափուկ տոների մեջ իշխանասեր, փառամոլ, ուժեղ Այնաստի կերպարն ստանալու համար պետք է լինել շատ փորձված արտիստուհի... Սազանդարյանն ինձ ապշեցրեց որպես սքանչելի դրամատիկ դերասանուհի ու վոկալիստ» (5. էջ 13):

Բակապես Այնաստի դերը Սազանդարյանի կատարմամբ մեր երաժշտական կյանքում դարձավ բացառիկ երևույթ: Այս դերը երիտասարդ արտիստուհուն բերեց անվերապահ ճանաչում:

Ինչով ունկնդիրներին զարմացրեց Սազանդարյանի Այնաստը: Մրան դժվար է միանշանակ պատասխանել: Այստեղ և կերպարի իսկական կենսական հավաստիություն կար և նրան անդադար շարժման, զարգացման ընթացքում ցույց տալու կարողություն, և իհարկե օպերային բեմում հազվադեպ պատահող վոկալի, երգեցողության և դրամատիկական խաղի օրգանական միասնություն:

Հենց առաջին մուտքից Այնաստ-Սազանդարյանը տիրաբար իրեն էր գամում ունկնդրի ուշադրությունը և հետո արդեն նրան պահում չընդհատվող լարվածությամբ: Կրքերի շիկացումը, որ կատաղորեն փոթորկվում էին Այնաստի հոգում, ակամայից գրավում էր ամբողջ լսարանը, ներկայացմանը հաղորդում անկեղծ դրամատիզմով, ողբերգությամբ ողողված մթնոլորտ:

Հետաքրքիր են երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր Գևորգ Շմավոնի Գյոդակյանի հուշերը Մոսկվայում կայացած հայ արվեստի տասնօրյակի մասին. «Խոր իմաստ է պարունակում Այնաստի կերպարը: Միամտություն է նրան պարզապես չարագործ ու ուժեղագործ համարելը: Կերպարը շատ ավելի բարդ է ու հակասական, ինչպես և բնավ միանշանակ չէ՝ հենց կոմպոզիտորի վերաբերմունքը իր օպերայի գլխավոր հերոսուհու նկատմամբ: Այնաստի կերպարը ներկայացված է մեծ շարժման, զարգացման մեջ: Նա դեռևս չի հայտնվել բեմի վրա, բայց արդեն Շելյիսի պատմության մեջ գմայլելի տեսիլքի պես հայտնվում է հայ գեղեցկուհու կերպարանքը:

«Շուր էն աչքերը Ջավախքի դստեր, ու կորչում է մարդ նրա հայացքում, ճակատը ճերմակ է ձյունից էլ դեռ, որ բարձր Աբուլի գագաթն է ծածկում» (6. էջ 116):

Այնաստի կերպարի բարդությունը նրա բազմապլանայնության, տարբեր, երբեմն՝ խիստ հակադիր հոգեկան վիճակների արագ փոփոխությամբ: Սազանդարյանը նրբորեն էր հաղորդում այդ փոփոխությունները, յուրաքանչյուր պահին բեմում ապրելով Այնաստի կյանքով:

«Այնաստին համակած վատ ու անորոշ կանխագացումները որոշակի իմաստ են ստանում նրա ոչ մեծ արիտոզությամբ, գահի ու փառքի հասնելու բաղձանք, որ նրա հոգում արթնացրել են Նադիր շահի խոստումները, և սրտի ցավագին մորմոք, քանզի նպատակին կարող է հասնել դավաճանության ճանապարհով՝ հրի ու սրի մատնելով իր ժողովրդին ու հայրենիքը:

Այստեղ է, որ առաջին անգամ նրա հոգում բախվում են այդ իրարամերժ զգացումները, առաջին անգամ հնչում է «Բայց ինձ վայել են գահն ու փառքը» փառասիրության լեյտմոտիվը» (3. էջ 149):

Անմոռաց տպավորություն էր թողնում Այնաստի առաջին դերերգը: Կարծես հոգու ամենախորունկ անկյուններից էր ծնվում հերոսուհու թախիծը դրսևորող այդ տխուր մեղեդին: Այնաստին պատած մոայլ խոհերն աստիճանաբար էլ ավելի սուր բնույթ էին ձեռք բերում, ձայնի մեջ արտացոլվում էր հասունացող զգացումների շփոթ վիճակը:

Եվ որպես այդ ամենի բարձրակետ՝ հնչում էր դերերգի ավարտին: Բայց այդ բարձրակետն արտասովոր էր. նվագախմբի ուղեկցման թափանցիկ ֆոնի ներքո սկիզբ էր առնում հասարակ, պարզ, ժողովրդական երգի պես մաքուր և ջինջ, բայց հազվագյուտ հուզականությամբ ազդեցիկ մեղեդին: Ասես որպես արձագանք կանանց երգախումբը թախիծով լի, նրա հետ կրկնում էր. «Գյուլում ջան, գյուլում ջան»:

Դերերգի երկրորդ մասում Այնաստն ամբողջովին հիշողությունների գիրկն է ընկնում, հիշելով զարնանային «Ջանգյուլումի» տոնակատարությունը, երբ վիճակահանությամբ պարզվում է նրա կյանքի կանխատեսումը՝ տխուր ճակատագիրը: Երրորդ մասը հնչում է ավելի տխուր: Հնչում է նրա ճակատագրի թեման:

Սազանդարյանի զարմանալի կատարմամբ այս մեղեդին մարմնավորում էր դատապարտվածության բուն գաղափարը, այնքան անմարելի թախիծ ու վիշտ կար այնտեղ: Ձայնի վճիտ ու հարթ, կարծես աննյութական հնչեղության մեջ չէր զգացվում անգամ փոքր իսկ ընկճվածություն, վշտին ակտիվորեն հակադրվելու որևէ ձգտում. միայն հոգու սև խավար՝ նույնիսկ հույսի ամենաթույլ շողով անգամ չլուսավորված:

Թեև այս դրվագը շատ կարճատև էր, այնուամենայնիվ այն ձեռք էր բերում վճռական նշանակություն. ճակատագրական այս տեսիլքի մոայլ ստվերն անտեսանելիորեն սավառնում էր Այնաստի կերպարի զարգացման հետագա ամբողջ ընթացքով:

Այնաստի հոգին դառնում էր հակասական ու տանջալից զգացումների պայքարի ասպարեզ: Գայանեի

հետ ունեցած տեսարանում, երբ նա մտովի դիմում էր սիրած Թաթուլին, երգչուհու ձայնը պայծառանում էր, և լայն կանտիլենան ոգեշնչում էր կենդանի ու անկեղծ զգացմունքի թրթռոտով:

Մպենդիարյանին հաջողվել է մի խումբ առանցքային մեղեդիներով բացահայտել Ալմաստի կերպարի հակադիր կողմերը:

Դրանցից մեկն Ալմաստի և Թաթուլի սիրո թեման է: Այդ թեման տխուր է հնչում, քանի որ Ալմաստը զգում է, որ փառանդությունը պատել է իր սիրտը: Թեմայի միտրային մեղեդու յուրօրինակ հարմոնիան զուգահեռ մաժորում տալիս է փափկություն, ջերմություն և միննույն ժամանակ՝ տխրություն:

- Ախ, հոգիս է երգում..., - երգում է Ալմաստը:

Բայց ահա հայտնվում է աշուղը և Ալմաստին խոստանում արքայական թագ, անհամար գանձեր, շահի սերը: Անշարժանալով՝ ամբողջովին լսողություն դարձած, Ալմաստ-Սազանդարյանն ազահորեն որսում է աշուղ-երգչի յուրաքանչյուր բառը, և նրա բորբոքված երևակայության համար այդ պահին չկար առավել քաղցր ու անձկալի երգ: Եվ նա արթուն անրջում էր արդեն՝ ըմբռնվելով ապագա փառքն ու հզորությունը (3. էջ 15):

Իրավ, ինչու՞ ես թագուհի չեմ,  
Հզոր ու մեծ իմ նոր փառքով,  
Բացվում է լայն արծվի թռիչքը,  
Կապույտ երկնքում, ահեղ ոնց ծով:

Սազանդարյանն այս տեսարանն անց էր կացնում մի բարձր շնչով: Ավելի սլացիկ էր թվում նրա իրանը, կեցվածքը՝ հպարտ. նրա ձայնը ձեռք է բերում հզորություն ու ուժ և ազատ, անկաշկանդ ընթացքի մեջ վեր է խոյանում գնգուն մետաղով հաղթահարելով նվագախմբի գորեղ ու հնչեղ ձայների շեշտը:

Եվ ապա այդ անգուսպ պտոթկումից հետո նորից հոգին ծվատող սարսափելի մտքեր (և՛ այրող ամոթանք, և՛ հավերժ անեծք... Արյան հեղեղ, մութ դժոխք"), իսկ ձայնը՝ ծարաստիճան պրկված լարի պես, պատրաստ ուր որ է կտրվելու. «Օ, Գայանե, ինձ հույս տուր, տեր իմ աստված, աղաչում եմ քեզ, վռնդի՛ր աշուղին» (3. էջ 15):

«Այստեղ Սազանդարյանի կատարումը հասնում էր դրամատիզմի այնպիսի բարձունքների, որ ի վիճակի էին դրսևորվելու միայն իրոք ականավոր արտիստներ» (5. էջ 15):

**Երրորդ գործողություն**

Երբ դավաճանելու որոշումը վերջնականապես հատունացած էր, Ալմաստ-Սազանդարյանի գործողություններն ավելի վճռական տեսք են ընդունում: Այստեղ նա դառնում է ուրախ խրախուսանքի ոգին: Նա սրբնթաց հայտնվում էր խրախուսանքների տարբեր խմբերի մեջ, եռանդը ժայթքում էր շատրվանի պես, աշխույժ ռեպլիկները համընդհանուր ծիծաղ, ուրախություն էին առաջացնում: Եվ միայն շարժումների մեջ մերթ ընդ մերթ սողոսկող անտվոր տենդը, հայացքում կասկածը կամ ուժասպառ վար իջեցրած ձեռքերը վկայում էին այն մասին, թե այս երկակի խաղը հոգեկան ուժերի ինչպիսի մեծ լարում է պահանջում հերոսուհուց (3. էջ 16):

Կերպարի զարգացման բարձրակետն էր դառնում Ալմաստի պարը:

Օպերային բեմի պայմաններում պարային դրվագը ոչ պրոֆեսիոնալի կատարմամբ բացառիկ երևույթ էր և, իհարկե, ամեն երգչուհի չէ, որ կարող է նման ռիսկի գնալ:

Սազանդարյանն այդ անում էր սահուն ու անկաշկանդ, ինչպես իսկական պարուհին: Նրա պարի պլաստիկան զարմանալիորեն գեղեցիկ էր ու արտահայտիչ:

Սազանդարյանի կատարմամբ Ալմաստի պարը նախ և առաջ դրամատիկ բնույթ էր կրում: Մկզբում պարը գնում էր դանդաղ տեմպով: Ալմաստի մեղմ ու սահուն, չտեսնված նրբագեղ շարժումներում կար ոչ միայն սեփական գեղեցկության, հիասքանչ դեմքի, իրանի, ձեռքերի գրավչության ուժը գիտակցող մարդու յուրատեսակ ինքնահիացում, այլև թախիծով լի մի հմայիչ զգացում: Կարծես հրաժեշտ էր տալիս նա անցյալին, կյանքում ամենաթանկ ու սիրելի բաներին: Աստիճանաբար փոխվում էին մոտիվները և պարի դիրքը աստիճանաբար ուժգնանում է: Այստեղ այն արտահայտում էր տագնապի ապրումներ, որոնց զուգակցվում էին մոլեգին կատաղությունն ու հուսահատ վճռականությունը:

Եվ գործողության զագաթնակետը՝ մթության մեջ, արբած ու քնած գինվորների մարմինների վրայով անլուսի սահուն է Ալմաստը: Նա բարձրանում է բարձունքի վրա, մինչև թշնամիներին պայմանական նշան տալը նայում է, հայացքով որսում Թաթուլին, կարծես ձգվում է դեպի վերջինս, ապա շեշտակիորեն շրջվելով, դանդաղ բարձրացնում է վառված ջահը. դավաճանությունն ի կատար ածվեց:

Ֆինալում Ալմաստ Սազանդարյանի մոտ տիրապետող էին երկու զգացումը՝ շահին իր խոստումը կատարելու վճռականությունն է, իսկ հետո, երբ հերոսուհին հասկանում է, որ խաբված է՝ նրան պատում է հուսահատությունն ու խորտակված հույսերի դառնությունը:

Եր կատարման մեջ արտիստուհին բացառել էր այն ամենը, ինչն ամենափոքր չափով իսկ կարող էր կարեկցանք, հերոսուհու հանդեպ խղճահարություն առաջացնել: Այդպես էր մտահղացված բեմադրողների կողմից, և այդպես էլ ֆինալում Սազանդարյանը դրսևորում էր Ալմաստի կերպարը: Եվ բնականաբար հերոսուհու մահն ընդունվում էր իբրև անողորմ, իրավացի հաստուցում կատարվածի հանդեպ:

Անցավ անտես ու անման  
Էն սիրունը աշխարհից...  
Ինչպես ծաղիկն անցած գարնան,  
Որ չի ծաղկել էլ նորից:

1939 թվականի «Ալմաստ»-ն ունեցավ հասարակական լայն արձագանք, բեմում մնաց գրեթե քառորդ դար: Այդ ներկայացման ստեղծմանը մասնակցեցին ազգային մշակույթի հոյակապ գործիչներից շատերը՝ դիրիժոր Գևորգ Բուդաղյանը, նկարիչ Մարտիրոս Մարյանը, բեմադրողներ Վարդան Աճեմյանը և Ռուբեն Մխոնովը, երգիչներ Լևոն Բսեցկի-Բոնեսյանը, Պավել Լիսիցյանը և շատ ուրիշներ:

# Կատարողական արվեստ

Նրանց մասնակցությունը, անշուշտ, օգնել է երիտասարդ երգչուհուն գտնելու Ալմաստի բարդ կերպարը բացահայտելու ճիշտ բանալին, նպաստել է նրա կատարման բարձր մակարդակին: Ամբողջ ներկայացման անկրկնելի, յուրօրինակ արժեքը շատ բանով պայմանավորված էր Ալմաստ--Սազանդարյանի մասնակցությամբ: Նրա բացակայությունը ներկայացումը զրկում էր, թերևս, ամենից կարևոր, գեղարվեստական տեսակետից անփոխարինելի տարրերից (3. էջ 16-17):

Արդյոք տարված էր այդ ժամանակ Սազանդարյանը Թումանյանի քառյակներով թե ոչ, բայց բնածին արտիստիզմը և տաղանդի արտաքուստ զուսպ, բայց հուզումնալի խորությունը նրան ցույց էին տվել այդ ուղղվածությունը: Դրամատիզմով և ծանր կանխագագամբ լեցուն Սազանդարյանի կատարումը ձուլվում էր Թումանյանի պոեմի խորությամբ: Կարևոր դեր ու նշանակություն էր ստանում Տաթևիկ Սազանդարյանի՝ ընդհանրացված մարդկային կերպար ստեղծելու ձիրքը:

Եթե այդ բարդ գագամները Սազանդարյանի մոտ չլինեին, նրա Ալմաստը կմնար լոկ երգային մի թուփից երգաբաժին: Չէր լինի այն բեմական խորությունը, կերպարի ցայտուն ու սուր դրսևորումը, որով դերասանուհին ներկայացման մյուս գլխավոր կերպարներ՝ Նադիր շահի և Թաթուլի հետ միասին բացահայտում էր այդ հռչակավոր պոեմի բուն փիլիսոփայական էությունն ու գաղափարը: Սազանդարյանի ստեղծած հերոսուհու արքայավայել հպարտությունը դեպքերի հեռանկարային ճշմարտությամբ բնութագրում էր մի անհատի, բայց ոչ ազգային ինքնությունը կրող հերոսի: Բեմական արվեստի իրոք սպառնիչ զորությամբ էր կատարում դերասանուհին իր դերը (5. էջ 72):

Հետաքրքիր են և նշանակալի մի շարք արվեստագետների և երաժշտագետների հուշերը Սազանդարյան-Ալմաստի մասին:

«Գլխավոր դերակատարների շարքում առաջին տեղը պատկանում է Տաթևիկ Սազանդարյանին: Երիտասարդ դերասանուհուն հաջողվել է ստեղծել հոգեբանորեն ճշմարտացի և խորը կերպար: Երկրորդ գործողության մեջ նա վեհապան է (մինչև աշուղի հայտնվելը), երրորդում՝ խռովքի մեջ, իսկ չորրորդում արդեն՝ ստորացած: Ալմաստի կերպարի զարգացման այս բոլոր աստիճանական փոփոխությունները Տաթևիկ Սազանդարյանը հաղորդում է նրբորեն ու արտահայտիչ՝ դրսևորելով իր հագվագուտ դերասանական տաղանդը: Սազանդարյանի ձայնը չափազանց գեղեցիկ է» (5. էջ 93-94):

Երաժշտագետ՝ ԴԱՎԻԴ ՌԱԲԻՆՈՎԻԸ  
1939թ.

«Երբ խոսում ես Տաթևիկի մասին, ապա մի տեսակ չես հավատում, որ այդ դեռատի, համեստ աղջիկը կարողացել է թափանցել Ալմաստի այդքան հակասական և գլխավորը ոգով իրեն այդքան խորը կերպարի մեջ: Բայց արտիստուհու բեմում հայտնվելուն պես կասկածները չքանում են: Սազանդարյանը խորը և արտահայտիչ կերպով է բացահայտում Թաթուլի նենգ կնոջ հոգեկան բարդ

աշխարհը, որն իր անհագ փառատոլությանը զոհ է բերում իր ժողովրդին և իր հերոս ամուսնուն: Որքա և ճշմարտացի է արտահայտված Ալմաստի խռովքի ուժգնացումը, ինչքա և արտահայտիչ է նրա պարը, որ Ալմաստի կերպարի դրամատիկական զարգացման կուլմինացիաներից է: Խնջույթի թեժ պահին կամենալով իլլացնել իր տագնապն ու մահաշունչ թախիժը՝ Ալմաստը սկսում է պարել վեհաշուք, ասես օդում ճախրելով, նա սահում է գորգի վրայով, և միայն նրա ձեռքերն են խոսում հոգին ծվատող դժնի պայքարի մասին...» (5. էջ 93):

ԱԼԵՔՍԱՆԴ ԵԱՆՎԵԼԴՅԱՆ  
ՀՍՍՀ արվեստի գործիչ 1939թ.

«Երևանի օպերային թատրոնի բեմը ազգային հիասթանչ երգչուհիներ շատ է տեսել: Բայց, անտարակույս, նրանցից ոչ մեկը չի ունեցել վոկալ և բեմական վարպետության այսպիսի ներդաշնակ համաձուլում: Այս առումով Սազանդարյանը եղել է և առայժմ մնում է որպես բացառություն» (5. էջ 93):

Երաժշտագետ ԳԵՎՈՐԳ ԳՅՈՂԴԱԿՅԱՆ

Սպենդիարյանի «Ալմաստը» մինչև օրս չի կորցրել իր գեղարվեստական նշանակությունը և մնում է հայկական օպերային արվեստի լավագույն ստեղծագործություններից մեկը, որն այժմ էլ վայելում է ժողովրդի սերը և նրանով դաստիարակվել է մի ամբողջ երիտասարդ կուլտուրոստրների սերունդ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Тигранов Г. Г. Армянский музыкальный театр, 1956г., Ер.: Айпетрат, т. 2, - 309 с.
2. 100 Опер, Ленинград: Музыка, 1968 г., - 624 с.
3. Հարությունյան Մ. Գ., Բարսամյան Ա. Մ., Հայ երաժշտության պատմություն, Եր., Նոր դպրոց, 1996 թ., - 370 էջ:
4. Александр Спендиаров. Статьи и исследования, АН Арм.ССР, Ин-т искусств; /Сост и ред. Геодакян Г. Ш.; Ред. Рухкян М. А., Ер.: Айпетрат, 1956г., - 309 с.
5. Ստեփանյան Ջ. Ս., Իոնիսյան Ի. Ս., Տաթևիկ Սազանդարյան, Եր., Հայկական թատերական ընկերություն, 1984 թ., - 318 էջ:
6. Գյողապյան Գ. Ե., Էջեր հայ երաժշտական պատմությունից, /գիտխմբ. Մուշեղյան Ա., Եր, հհ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 թ., - 300 էջ:

Tigranov G. G., Armenian Musical Theater, 1956, Yerevan, Haypethrat, Vol. 2, - 309 pp.  
100 Operas, Leningrad: "Music" Publishing House, 1968, - 624 p.  
Harutyunyan M. G., Barsamyan A. M., History of Armenian Music, Yerevan, New School, 1996, - 370 p.  
Alexander Spendiaryov. Articles and Research, Academy of Sciences of ArmSSR, Institute of Arts; /Compiled and edited by Geodakyan G. Sh.; Ed. Rukhkyan M. A., Yerevan: Haypethrat, 1956, - 309 p.  
Stepanyan J. M., Ionisyan I. S., Tatevik Sazandaryan, Yerevan, Armenian Theater Company, 1984, - 318 p.  
Geodakyan G. Sh., Pages from Armenian Musical History, /ed.

Musheghyan A., Yer.: "Science" Publishing House of the RA NAS, 2009, - 300 p.

REFERENCES

1. Tigranov G. G., Armyanskij muzykal'nyj teatr, 1956 g., Yer.: Aypetrat, t. 2, - 309 s.
2. 100 Oper, Leningrad: Izdatel'stvo "Muzyka", 1968 g., - 624 s.
3. Harutyunyan M. G., Barsamyan A. M., Hay erazhshtuthyan patmowtyun, Yer., Nor dprotz, 1996 th., - 370 p.
4. Aleksandr Spendiarov. Stati i issledovaniya, AN Arm.SSR, In-t iskusstv; /Sost. i red. Geodakyan G. Sh., Red. Rukhkyan M. A., Yer.: Aypetrat, 1956 g., - 309 s.
5. Stepanyan J. M., Ionisyan I. S., Tathevik Sazandaryan, Yer., Haykakan taterakan 'nkeruthun, 1984 t., - 318 p.
6. Geodakyan G. Sh., Eijer Hay erazhshtuthyan patmuthyunitz, /git. khmbagir A. Musheghyan, Yer.: HH GAA "Gituthyun" hrat., 2009, - 300 ejj.

**Հեղինակի մասին.** ՋՈՒԼԻԵՏԱ ՎՈԼՈԴԻՄԵՐ ՆԱԶԱՐԻԱՆ (ծ. 09.08.1960 թ., ք. Երևան): 1991-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մեներգեզողության բաժինն օպերային երգչուհի և դասատու որակավորմամբ (ղեկ. պրոֆ. Տ. Տ. Սազանդարյան), 1991-1993թթ.՝ ասպիրանտուրան (ղեկ. Տ. Տ. Տազանդարյան): 1991թ. աշխատել է օպերային ստուդիայում որպես մեներգիչ: 1994 թ. եղել է Տ. Տ. Սազանդարյանի ասիստենտը և զուգահեռ դասավանդել դասական վոկալ բաժնում մինչ օրս: 1992-1997 թթ. դասավանդել է Ջայնի պահպանման վոկալ-երաժշտական դպրոցում: 1997-2018 թթ. դասավանդել է Ռ. Մելիքյանի անվ. քոլեջում: 2006 թ. յույս է տեսել «Հայ կոմպոզիտորների երգեր և ռումանսներ» վոկալ-մեթոդական ժողովածուն, 2007թ.՝ «Գևորգ Արմենյանի երգեր և ռումանսներ» ժողովածուն 2007թ.՝ «Вокально-методические и педагогические принципы, профессора Т. Т. Сазандарян»: 2008 թ. ստացել է դոկենտի կոչում: 2013 թվականից մինչ օրս դասավանդում է Սպենդարյանի անվան երաժշտական դպրոցում՝ ղեկավարելով դասական վոկալ բաժինը: 2016 թ. Մեթոդկարիների կողմից գործուղվել է Արցախ և Կիրովական երաժշտական դպրոցներում և քոլեջներում վարպետաց դասեր անցկացնելու համար: 2016 և 2017 թթ. մասնակցել է «Ոսկե տավիղ» մրցույթին, որպես ժյուրիի նախագահ, 2015 և 2017 թթ.՝ Չարենցավանում մրցույթ-փառատոնի ժյուրիի անդամ 2021 թ.՝ ժյուրիի անդամ Վալերի Հարությունովի անվան մրցույթում, 2024 թ.՝ ժյուրիի անդամ Մինորա մրցույթ-փառատոնում 2024 թ.՝ ժյուրիի անդամ Գլոբալ Ֆեստ մրցույթ-փառատոնում: Վեց ուսանողները միջազգային մրցույթների դափնեկիրներ են:

**About the author:** JULIETA VOLODYA NAZARYAN (born on August 9, 1960, in Yerevan) - In 1991, she graduated from the Vocal Performance Department of Yerevan Komitas State Conservatory, qualifying as an opera singer and teacher (supervisor: Prof. T.T. Sazandaryan). From 1991 to 1993, she completed a postgraduate course under the same professor. In 1991, she worked as a soloist at the Conservatory's opera studio. In 1994, she became an assistant to Prof. T. T. Sazandaryan and simultaneously began teaching at the Classical Vocal Department, where she works to this day. From 1992 to 1997, she taught at the Vocal-Music School for Voice Preservation. From 1997 to 2018, she taught at R. Melikyan Music College. In 2006, she published the vocal-methodical collection "Songs and Romances by Armenian Composers", followed in 2007 by "Songs and Romances by Gevorg Armenian", as well as "Vocal-Methodical and Pedagogical Principles of Professor T. T. Sazandaryan". In 2008, she was awarded the academic title of Associate Professor. Since 2013, she has been teaching at Spendiarian Music School, leading the Classical Vocal Department. In 2016, she was commissioned by the Methodological Cabinet to conduct masterclasses in music schools and colleges in Artsakh and Kirovakan. She has also served on juries of numerous competitions: Chair of the jury at the "Golden Lyre" competition in 2016 and 2017, jury member at the Charentsavan Festival-Competition in 2015 and 2017, jury member at the Valeri Harutyunov Competition in 2021, jury member at the "Minora" Festival-Competition in 2024, jury member at the "Global Fest" Festival-Competition in 2024. Six of her students have been laureates of international competitions.

**Об авторе:** ДЖУЛЬЕТТА ВОЛОДЬЕВНА НАЗАРЯН (родилась 09.08.1960, Ереван). Окончила: отделение сольного пения Ереванской государственной консерватории имени Комитаса, получив квалификацию оперной певицы и педагога, руководитель проф. Т.Т. Сазандарян (1991); аспирантуру ЕГК, руководитель Т.Т. Сазандарян (1993) Работала: солисткой оперной студии (с 1991); ассистентом Т.Т. Сазандарян (с 1994); преподает на кафедре классического вокала ЕК в музыкальной школе сохранения голоса (1992-1997); в колледже им. Р. Меликяна (1997-2018). 2006 Вокально-методический сборник «Песни и романсы, армянских композиторов» был издан в 2007 году. Сборник «Песни и романсы. Геворга Арменияна» был издан в 2007 году. Сборник «Вокально-методические и педагогические принципы, профессора Т. Т. Сазандарян» (2007). Доцент (2008). С 2013 года по настоящее время преподает в музыкальной школе им. Спендиаряна, заведую кафедрой классического вокала. В 2016 году Методическим кабинетом была направлена для проведения мастер-классов в музыкальные училища и колледжи Арцаха и Кировакана, в 2016 и 2017 годах участвовала в конкурсе «Золотая арфа» в качестве председателя жюри, в 2015 и 2017 годах - член жюри конкурса-фестиваля в Чаренцаване, в 2021 году - член жюри конкурса им. Валерия Арутюнова, в 2024 году - член жюри конкурса-фестиваля «Минора», в 2024 году - член жюри благотворительного фестиваля «Global Fest». Шесть ее учеников являются лауреатами международных конкурсов.